104. ԱՐՉԸ

Մին դռներմ մին մարթ քյնում ա քոլը, թա՛ փաղ անե։ Էտ քոլումրտ մին արչու ոյուն ա ընում, արչը պունան տունս ա կյամ, թա՛ Լա մարթիտ օտև։

Էտ մարթը արչին ասում ա. — Էնա օղտերը կյամ ըն, քյրեզ ուտլական ըն։

Արչն ասում ա.— Պա հո՞ւնց անըմ։

Մարթրն ասում ա.— Նի մոտ չուվալը ծառան կախ տամ, վեր կարին վեչ քյրեղ օտեն։

Արչը նի յա մննում չուվալը, մարթը արչեն կախ ա տամ ծառան, սկսում թակելը, համ էլ ասըմ.— Կրճա՛լա՛ծ, ըրգյընա՛լա՛ծ,— համ ասում ա, համ թակում։

Արչը ռուրգա՛ն տափեն վեր ա ընգնում, չուվալան տունս կյամ, փախչում, քյինում շատ արչեր հվաքում, կյամ, վեր էտ մարթեն օտին։ Էտ մարթը փա՛դը թողում ա, էշին էլ թողում փա՛դին քշտեն, եր ընում մին ծառ։ Արչերը կյամ ըն ծառեն տակեն պայման անըմ, հունց անին, վեր էտ մարթին օտին։

Ընդրանք ասըմ ըն.— Ուրուր կըլխե վրեննը կենանք, մինա՛կ էտ թակված արչը լոխճան տակեն ինի։ Տհենց շրվելավ քյնա՛նքյ, հանինքյ էն մարթին։

Տհենց էլ անըմ ըն։ Արչը վեր հրանում ա էն մարթին, մարթը կըրկնում ա ուրա՛ն խոսկերքը։ — Կրճա՛լա՛ծ, ըրգյընա՛լա՛ծ, մհենգյ էլ սրանք ըն ինձ թակում, ըրգյնա՛լա՛ծ, կրճա՛լա՛ծ։

Արշը ըսկընալավ էն մարթին խոսկը, վեր ուրան թկելիս ասալ ա, գյուդում ա թա նահանց թակում ա, տական տուս ա պըրծնում, մեկալն էլ վեր ըն տեռնըմ, կտորվում։ Էտ մարթը ծառան վեր ա կյամ։ Էտքան ամալըտ ընդրան ասալ ար մին աղվես։ Էտ մարթը էշը պեռնում ա, տոն քյինա, հըղըցումը աղվեսին շհում ա։

Աղվեսն ասում ա. — Հախս տու։

Էտ մարթը մըխրեգյ մտածում ա։ Էտ սհաթեն ռուրդան փորը ղուղրամ ա։

Աղվեսըն ասում ա.— Էտ հի՞նչ ա պըտահալ, մարթ ախպեր։

Մարթըն ասում ա.— Մին տըռնե սով ա իլալ, էտ տըռնեն էրկու շոն ըմ կոլ տվալ, մհենգյ էլ մինն ասում ա. «Ես ըմ տուս կյամ օտիմ էտ աղվեսին», էն մինն էլ ասում ա. «Ցրես ըմ տուս կյամ»։

Աղվեսըն ասում ա.— Դե մին մըխրե քյրեզ պահե, փախչիմ, հռանամ։

Էն մարթը սըհենց էլ անըմ ա։ Ետնան էշը պեռնած քյինամ ա տոն։